

Վ Ե Ր Ժ Ա Ր Ե Ն

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՄՍԵԳԻՐ

ՀԱՅՏԵՄԲԵՐ

1882 Ս. ՏԱՐԻ

№ 3

ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Ձ Դ Ս Կ Ո Ր Ե Ս Պ

(ԱՆԵՆՐՈՇՆԻ ՀԵՔԻԱԹՆԵՐԻՑ)

Ժամանակը փոխորդիկից լիառի ձիակորեակի արտազն
տնայկացողը տեսնում է, որ արտը սեպեղ է և
բոլոր պառկել գետնի վերայ, կարծես թե կայ-
ծակն է խփել: Գիւղացիք օտարաբար ուռումնն աչս
դէպքում թէ՛ կայծակն է խփել: Բայց թէ ահա կայծակն
ինչու է ձիակորեակի թշնամի: Եւ կը պատմեմ ձեզ այն,
ինչ որ պատմեց ինձ ծիտը: Իսկ ծիտը լսել է այս ծեր
ուռու ծառից, ուռեւուց, որ կանգնած էր ձիակորեակի
արտի մօտ: Այս մի պատուելի ծառ էր շատ ծերացած և
արգէն թեքուած: Ուռեւին սեն էր մի խոռոչ, ուր բուս-
նում էր խոտ և մորենի: Ծառը համարեմ թէ գետնին էր
կպել և կախ ընկած ոտակրը կամոյց երկար մազերին էին
նմանաթիւն տալիս:

Բոլոր շրջակայ դաշտերում բուսնում էր Եւ հաճար,
Եւ դարի, և մինչև անդամ վարսակ: Աստուծաւ տէրն
այս արտերի վերայ էր և քանի էլ սոցա հասկերը լցվում
էին, այնքան նոքա կախ էին ղցում իրանց ղլուխները
համեօտութեամբ:

Հէնց դոցա կից էր և ձիակորեակի արտը և այդ արտի ծայրին կանգնած էր այն ծերունի ուռենին: Զիակորեակը չէր թեքում իւր գլուխը, այլ ուղիղ և հպարտութեամբ գլուխը բարձրացրել:

— Ես էլ պտղատու եմ միւս հասկերի պէս, ասում էր ձիակորեակը. բացի այդ՝ ես գեղեցիկ էլ եմ նուցանից: Մարդու սիրտն ուրախանում է, երբ իմ արտին է նայում: Աստ, խնդրեմ, ալւոր ուռենի, ինձանից գեղեցիկ բան տեսե՞լ ես դու աշխարհում:

Ուռենին գլուխը շարժում էր, կարծես թէ ուզում էր ասել, թէ՛ «իհարկէ, տեսել եմ»:

Բայց ձիակորեակը գլուխը բարձրացրած, քիթը վերքաշած ասում էր՝ «յիմար ծառ ես. ծերութիւնից քո բնի վերայ խոտ է բուսնում»:

Մի անգամ սաստիկ փոթորիկ վեր կացաւ: Բոլոր դաշտի ծաղիկները խոնարհեցրին տերւները և սպասում էին փոթորիկի վերջին: Իսկ ձիակորեակը խրոխտանում էր իւր գեղեցկութեամբ:

— Գլուխդ կախ գցէ, ասում էին նորան միւս ծաղիկները:

— Ո՛չ երբէք, պատասխանեց ձիակորեակը:

— Գլուխդ թագցրո՛ւ, ասում էին միւս հասկերը: Զգուշացի՛ր, թէ չես փոթորիկը կը ջարդէ քո գլուխը:

— Թո՛ղ այդպէս լինի. չեմ խոնարհիլ, պատասխանեց ձիակորեակը:

— Ծաղիկներդ թագցրո՛ւ և տերւներդ խոնարհեցրո՛ւ, ասում էր ուռենին. մի նայի՛ր փայլատակման, երբ ամպը կարծես ճեղքվում է և կայծակը փայլում: Մինչև անգամ մարդիկ զգուշանում են կայծակից. խոհեմութիւն արա՛, զգուշացի՛ր և դու:

Բայց ձիակորեակն ուղիղ նայում էր փայլատակման աւելի և աւելի հպարտութեամբ: Կայծակն ընկաւ և կարծես աշխարհը կրակ դառաւ:

Փոթորիկից յետոյ բոլոր ծաղիկներն ու հասկերն

անձրևով զովացած, շնչումէին մաքրած օդը. բայց ձիա-
կորեակը կայծակից այրուել էր և սևացած, անպէտք,
կանգնած էր դաշտումը:

Իսկ ծեր ուռենին շարժումէր իւր ճիւղերը և հո-
րա տերևներից ջրի կաթիլները թափվում, կարծես թէ
ծառը լալիս էր:

— Ո՛ւմ վերայ ես արտասվում, Հարցրին նորան
ծտերը: Այստեղ, փառք Աստուծու, ամենայն բան առատ
է: Տէս, ինչպէս սիրուն փայլումէ արեւը և ամպերն
անհետացնում: Չէ՞ս իմանում դու ծաղիկների և թփե-
րի սնուշ հոտը. էլ ո՛ւր ես լալիս, ալևոր:

Եւ ծեր ուռենին պատմեց նորան ձիակորեակի հը-
պարտութեան, լամառութեան և նորա անհնազանդու-
թեան մասին, որի համար նա այնպիսի պատիժ կրեց:

Թարգ. Գ. Տ. Ա.

ԽՆՁՈՐՆԵՐԻ ՈՐՍ

(ՓՈՔՐ ԱՆՍՆԻՏԻ ՆԱՄԱԿԻՑ)

Ահա վերջացաւ արձակուրդը: Սկզբում իրաւ տը-
խուր էի ես, սովորական ժամին երբ զարթում
էի, շտապումէի հագնուել, կարծելով թէ պէտք
է գնամ ուսումնարան. մէկ էլ տեսնես մօրաքոյրս ծի-
ծաղելով կանչումէր ինձ պարտեզում զբօսնելու: Բայց
դու չը կարծես թէ ամբողջ օրերը ես այսպէս էի անց
կացնում: Մօրաքոյրս օրուայ մէջ երկու ժամ նշանա-
կել էր անցեալ տարուայ մեր դասերի կրկնութեան հա-

մար: Նա ասումէր, որ արձակուրդը թէև տուած է ձմեռուայ պարապմունքներից հանգստանալու համար, բայց ամբողջ արձակուրդը պարապ անցկացնելն էլ շատ ձանձրալի է: Չշմարիտ է ասում մօրաքոյրս. միայն խաղալով ու միշտ զուարճանալով ժամանակ անցկացնելն էլ մի շատ ուրախալի և մխիթարական բան չէ:

Սկզբում ես մենակ էի մօրաքրոջս հետ թէ՛ պարապում և թէ՛ զուարճանում, բայց շուտով ինձ ընկերացան իմ քեռորդի Սրամբ և սորա քույր Սրուսեակը և մեր հարեւան և բարեկամ վաճառական Պետրոսի որդիք՝ Աշոտը և Իւղաբերը: Թէ և ես նոցա հասակակից չէի, բայց այդ չէր խանգարում ինձ նրանց հետ հաւասարապէս ուրախ ժամանակ անցկացնելու:

Նշանակուած ժամին, այն է առաւօտեան նախաճաշից յետոյ, իմ բոլոր ընկերակիցները ժողովվումէին մեր տանը և մենք մօրաքրոջս առաջնորդութեամբ գնումէինք մեր պարտէզը՝ պարապելու:

Մեր պարտէզը որ մեր տան կից է, մեծ չէ, բայց շրջապատած է սաղարթախիտ ծառերով. մէջ տեղում շինած է հովանոց որթի թփով պատած, և մէջը մեծ սեղան և շուրջը նստարաններ: Իջնելով պարտէզը մենք ուղիղ մտնումէինք հովանոց, նստոտում սեղանի մօտ և սկսում մեր պարապմունքը: Առաւօտեան մեր պարապմունքը տեղումէր մի ժամ: Սրուսեակը որ գիր չէր իմանում, նա էլ նստումէր մեզ մօտ և սկզբում ոչինչ զբաղմունք չունենալով, նա երկու կռները ծալած պառկումէր նստարանի վերայ, գլուխը թեքած և նայումէր թէ ինչպէս մենք լուռ կամ բարձրաձայն էինք տանում մեր գործը. նա այդ միջոցին սպասումէր մեր գործի վերջին և հէնց որ տեսնումէր թէ մենք գրքերը ծալումենք, վայր էր թռչում նստարանից և առաջն էր ընկնում ծափ տալով: Բայց շուտով մօրաքոյրս Սրուսեակի համար՝ զբաղմունք գտաւ և նա էլ լուռ մեզ հետ նստած համեմատումէր մանր թղթերի վերայ նկարած կենդանիների և բոյսերի

պատկերները գրքի մէջ նկարած նոյն տեսակ կենդանի-
ների և բոյսերի հետ: Նա յանկարծ բարձրաձայն ծիծա-
ղումէր, երբ յաջողվումէր նորան գտնել այդ համեմա-
տութիւնը և իսկոյն հարցնումէր մօրաքրոջիցս կենդա-
նու կամ բոյսի անունը:

Պարապմունքից յետոյ սկսումէինք զուարճանալ:
Առաջ զանազան երգեր էինք երգում: Դու գիտես որ
Իւղաբերը շատ լաւ ձայն ունի և շատ ուրախ աղջիկ է:
Նա միշտ երգել սկսողն է և մենք էլ նորա հետ շա-
քունակում: Արուեստակը չէր պակասում մեզանից, թէև
մեր երգած երգերից ոչ մին չէր իմանում. շատ անգամ
չափը կորցնումէր, եղանակը շփոթում և խանգարում
մեր երգը: Երգը վերջացնելուց յետոյ սկսումէինք մեր
սովորական խաղերը:

Մի օր մօրաքոյրս մեզ ասաց, թէ նա հնարելէ
մեզ համար մի նոր խաղ: Մենք շատ ուրախացանք, որով-
հետև մեր իմացած խաղերն այնքան էինք խաղացել, որ
պարապմունքից յետոյ, երբ մենք ուզումէինք որոշել
թէ ինչ խաղ պիտի խաղանք, գոյաբերութեամբ էինք
ընդունում. ոչ մէկը մեզ դուր չէր գալիս, բայց իհարկէ
վերջիվերջոյ էլի խաղումէինք:

Մօրաքրոջս հնարած խաղի անունն է «խնձորների
որս»: Հետաքրքիր է քեզ համար այն իմանալու թէ ինչ
տեսակ խաղ է այս խաղը: Մեզ ևս շատ հետաքրքիր էր
դա և մինչև այսօր ինձ շատ է դա զբաղեցնում ու
զուարճացնում:

Միև օրը երբ մօրաքոյրս յայտնեց մեզ նոր խա-
ղի մասին, մենք դեռ նստած էինք սեղանի շուրջը և
շարունակում մեր պարապմունքը. յանկարծ տեսնենք
մեր ծառան բերեց մի մեծ տաշտ և մի կուժ ջուր և
դրեց հովանոցի մէջ: Մենք բոլորովին ուշադրութիւն
չը դարձրինք այդ բանին, որովհետև մօրաքոյրս մեզ
ոչինչ չէր ասել թէ ինչ խաղ է «խնձորների որս»
խաղը և թէ երբ պէտք է այդ խաղը մեզ ցոյց տայ.

այս պատճառով մենք լուռ ու մունջ շարունակեցինք մեր պարապմունքը:

Հենց որ վերջացրինք մեր գործը, ծառան նորից եկաւ, նստարաններից մէկը յետ քաշեց մէջ տեղը, նորա վերայ դրեց իւր բերած տաշտը և մէջը կփից ջուր ածեց: Մենք բոլորեքեանքս շուրջը կանգնած հետաքրքրութեամբ նայումէինք այս ամէն բանին, սպասելով թէ ինչ կըլինի սորա վերջը: Արուսեակը ձեռքերը մէջքին դրած ամէնից առաջ էր կանգնած, մի քանի անգամ մօտենում տաշտին և մէջը նայում: Ուրախ Իւդաբէրը մի անգամ կատակ արեց բարձրաձայն ասելով, թէ Արուսեակին պէտք է լողացնենք: Մենք ամէնքս ծիծաղեցանք, Արուսեակն էլ մեզ հետ: Վերջը մօրաքոյրս հանեց գրպանից վեց հատ փոքրիկ խնձորներ և դրեց ջուրը: Արուսեակը զարմացած նայեց խնձորներին և յետոյ մօրաքոյրս երեսին:

— «Հապա, երեխայք, ասաց մօրաքոյրս, որսացէք ջրի մէջ այդ խնձորները:

Արուսեակը վրայ ընկաւ և ձեռքով տաշտից մի խնձոր հանեց. մենք էլ նոյնն ուզումէինք անել, բայց մօրաքոյրս չը թողեց:

— Ոչ, ոչ, այդ ի՞նչ խաղ է, ասաց մօրաքոյրս, Արուսեակին այդ ներելի է, նա փոքր է, բայց եթէ իմանայ թէ խաղն ինչպէս է լինելու, խնձորը նորից տաշտի մէջ կը դրէ:

— Հասկա, չուտե՞մ, ասաց Արուսեակը և անբաւականութեամբ խնձորը դրեց տաշտի մէջ:

— Ո՛չ, երեխայք, խնձորը ոչ թէ ձեռքով, այլ ատամներով պէտք է որսաք:

Այս ասելով մօրաքոյրս կռացաւ տաշտի վերայ, բերանը մօտեցրուց ջրի երեսին և կզակը ջրի մէջ դրած բերանը բաց արեց և բռնեց ատամներով մօտիկ լող տուող խնձորը:

— Ահա այսպէս պէտք է որսաք, ասաց նա վեր կե-

նալով, և խնձորը նորից տաշտի մէջ դրեց, մատի ծայրը մինչև անգամ չը պէտք է կալցնէք, աւելացրուց նա:

Մենք իսկոյն շարունեցանք տաշտի շուրջը: Խնձորները տաշտի մէջ լող էին տալիս, պտտումէին ջրի երեսին:

— Արուսեակ, Արուսեակ, ձայն տուեց Արամը, քո մօտով է անցնում, բռնիր խնձորը: Արուսեակը կռացաւ, դրեց կզակը ջրի մէջ, բերանը բաց արեց և հէնց որ ուզեց ատամներով բռնել խնձորը, խնձորը դուրս թռաւ ատամների տակից և լողաց դէպի Արուսեակի կանգնած դիմացի կողմը, որտեղ կանգնած էր Աշոտը: Սա էլ նոյնն արեց, բայց չը յաջողեցաւ բռնել խնձորը: Մեր ծիծաղին և ուրախութեանը վերջ չէր լինում, երբ մեզանից մէկին այդպէս չէր յաջողում: Սկզբում մօրաքրոջս որսալը տեսնելով այնպէս հեշտ էր թւում ինձ այդ խաղը, որ կարծումէի, թէ դա մեզ զուարճացնելու չէ, բայց արի՛ ու տես, որ առաջուց գուշակութիւնն անհիմն բան է եղած:

Ոհ, սիրելիս, դու չես կարող երևակայել, թէ որքան հետաքրքիր և զուարճալի է այս խաղը:

Տաշտի շուրջը կանգնած սպասումես որ խնձորն առչեիցդ անցնի, ահա՛ դու տեսնումես որ մին քո կողմն է դալիս, կռանումես տաշտի վերայ, կզակդ ջրի մէջ դնում, կարծումես որ ահա՛ իսկոյն կը կծես խնձորը, բայց չէ...նա սահումէ ատամների տակիցդ և դատարկ մնում...մէկ էլ տեսնես մի ուրիշը դալիս է քո կողմ, պարտրաստվումես նորից գոնեա այդ բռնելու և այս անգամ աւելի մեծ վստահութեամբ և քեզ աւելի փորձուած կարծելով, լայն բաց ես անում բերանդ, ծնօտներդ արագ շարժում, բայց չէ. ատամների միմեանց խփելու ձայնն ես միայն լսում, իսկ խնձորը հեռու շատ հեռու քեզանից լող է տալիս:

Արամին սկզբում նոյնպէս չէր յաջողում խնձորները որսալ. այդ բանը շատ էր զրգռում նորան և կարծես

ամաչումէր: Բայց վերջը շատ շուտով վարժուեցաւ և նա: Բայց և այնպէս Իւղաբերը նորից կատակ արեց, ասելով թէ Արամին նորա համար է յաջողվում, որ մեծ ու լայն բերան ունի, թէպէտ իհարկ է այդ միայն կատակ էր. որովհետեւ այդ այնպիսի մի խաղ է, որ լայն բերանը չի օգնել, այլ հարկաւոր է որ մարդս աւելի ճարպիկ լինի և մի տեսակ զգուշութիւն բանեցնէ:

Բարի և գլխաւորաւ Արամը միշտ իւր տարած խրնձորը բաժանումէր նոցա հետ, որոնք ոչ մին չէին ստացել:

Թէ ի՞նչ տեսակ զգուշութիւն է հարկաւոր և ի՞նչ պէս պէտք է ընտելանալ այդ խաղին, գծուար է, սիրելիս, քեզ բացատրել. կը խաղաս ինքդ և կ'իմանաս:

Քեզ ի՞նչ պէտք: Անահիտ:

Թարգ. Գ. Փ.



ԽԽՈՒՆՃՆ ՈՒ ՎԱՐԴԻ ԹՈՒՓԸ

(ԱՆԴԵՐՍԷՆԻ ՀԵՔԻԱԹՆԵՐԻՅ)

 Ոյգի կար ու նորա շուրջը կաղնու ծառեր. յետեւից բացվումէր դաշտը, ուր արածումէին կովեր և ոչխարներ:

Այգու մէջ տեղում կար մի ծաղկած գեղեցիկ վարդի թուփ:

Այդ վարդի թփի տակն ընկած էր մի խիտունճ:

— Փոքր ինչ սպասեցէք, քիչ ժամանակ տուէք ինձ, կը գայ և իմ հերթը, ասումէր խիտունճը: Եւ աւելի և աւելի օգտակար կը լինիմ: Միւսների նման ես

չեմ տալ միայն վարդեր, կաղնիք և կաթը՝ վարդի թփի, կաղնու ծառերի և կոփերի ու ոչխարների պէս: Ո՛չ, ես աւելի արդիւնաւոր կը լինիմ: — Այո՛, ես մեծ յոյսեր ունիմ այդ փոքրիկ կենդանուց, հաստատումէր, իւր մտքումն ասելով վարդի թուփը:

Յետոյ դարձաւ դէպի խոունճը և հարցրուց.

— Խնդրեմ ասէք, արդեօք երբ այդ բոլոր շնորհներդ պիտի կարողանանք տեսնել:

— Ես չեմ շտապում, պատասխանեց խոունճը: Դուք էք անհամբերը: Խնջի՛ն է պէտք այդքան շտապել. հիմն էք ուղղում զարմացնել:

Միւս տարին խոունճը նոյն տեղում կպած էր տերեւին, վարդի թփի տակ, իսկ վարդի թուփը կոկոմներ բռնած նորից զարգարվումէր իւր գեղեցիկ վարդերով:

Խոունճը կիսով չափ դուրս սողաց իւր բնակարանից, շարժեց իւր շօշափելիքները և կրկին լեռն քաշուեց իւր բոյնը:

— Դարձեալ ամէն բան հերուան պէս է, ասաց խոունճը: Վարդի թուփը շտապումէ իւր ծաղիկը ցոյց տալու. երևումէ դորանից աւելի էլ շնորհ չունի:

Անցկացաւ ամառը, լետոյ և աշունը: Վարդի թուփը ծաղկելուց չէր դադարում մինչև ձնելը, երբ ցոլւտն ու խոնաւութիւնը թառամեցրին նորան:

Յրտին վարդի թուփը տերեւածափ եղաւ, իսկ խոունճը մտաւ գեղնի տակ:

Եկաւ նոր տարին, բացուեցաւ գարունը, ծաղկեցաւ վարդի թուփը, երևեցաւ և խոունճը:

— Դուք այժմ սլառաւել էք, ասաց խոունճը վարդի թփին: Ժամանակ է հանգստանալուդ: Դուք աշխարհին տուիք բոլորը, ինչ որ կար ձեր մէջ, բայց ի՛նչ օգուտ. ես թէպէտ ժամանակ չունէի ձեզ վերայ մտածելու, բայց և այնպէս կարող եմ հաստատաբար ասել, որ դուք ձեր մտաւոր զարգացման համար ոչինչ չարիք:

Եթէ դուք աշխատել էիք մտաւորապէս, այն ժամանակ մի բան կը դուրս գար: Կարող էք ինձ հաշիւ տալ ձեր պարապմանց մասին: Ձե՞ որ դուք շուտով մի հասարակ փայտի կտոր էք դառնալու: Հասկանո՞ւմ էք իմ ասածը: — Դուք ինձ վախեցնում էք, ասաց վարդի թուփը: Ես բոլորովին չեմ մտածել այդ բաների վերայ:

— Դուք չէ՞ք մտածել: Իհարկէ: Դուք երբէք մտածելու սովոր չէք: Ասացէք խնդրեմ, դուք երբ և իցէ հաշիւ էք տուել ձեզ արդե՞օք, թէ ինչո՞ւ էք ծաղկում և ինչո՞ւ այդպէս էք ծաղկում և ոչ այլապէս:

— Ո՛չ, պատասխանեց վարդի թուփը: Ես ծաղկում եմ ուրախութիւնից, լիութիւնից: Արեւը փայլում էր ինձ վերայ և տաքացնում, օդը զովացնում ինձ, ես ծծում էի մաքուր ցօղը և անձրեւը. ես զուարթանում էի, ես անքնում էի: Կենդանարար զօրութիւնը ես ստանում էի և՛ ներքևից, գետնից և՛ վերևից, երկնքից, և ես զգում էի իմ բախտաւորութիւնը և այդ զուարճութիւնն ինձ ծաղկեցնում էր: Այսպէս էր իմ կեանքը, այլապէս ես չէի կարող անքնել:

— Շատ դուրեկան է, ես ձեզ ասեմ, այդպիսի կեանքը. կտրեց խօսքը խխուճնճը:

— Իհարկէ, դուրեկան է. պատասխանեց վարդի թուփը: Ամէն բան տուած էր ինձ: Բայց դուք աւելի էք ստացած քան թէ ես: Դուք խորամիտ բնութիւն ունիք, դուք այն շնորհալի և քանքարաւոր արարածներից էք, որ կարող էք աշխարհս հիացնել:

— Այդ իմ բանը չէ, ասաց խխուճնճը: Աշխարհի հետ ես գործ չունիմ: Ինչի՞ս պէտքն է բնութիւնը: Ես էլ հերիք եմ ինձ համար. ինչ որ իմ մէջը կայ, այն էլ բաւական է ինձ:

— Բայց խնդրեմ ասէք, թէ մի՞թէ մենք այստեղ, երկրիս վերայ պարտական չենք տալու ուրիշներին մեր մէջ եղած ամենալաւը: Մի՞թէ չը պէտք է տալ միւսներին, ինչ որ կարող ենք: Եւ ես էլ տալիս էի և

տուածս էլ միայն վարդ կարող էր լինել: Իսկ դուք, այդքան շնորհալի տեղովդ, ի՞նչ տուէք աշխարհին:

— Ի՞նչ պիտի տայի և ինչո՞ւ: Ինչի՞ս պէտքն են ուրիշները: Աշխարհս մի հատ փող չարժէ: Դուք վարդեր տուէք. եթէ կամենում էք: Դորանից էլ աւելի հօմ շնորհ էլ չունիք: Թող կաղնու ծառը կաղնիք տայ, կովերն ու ոչխարները՝ կաթը. նոքա բոլորն իրանց ժողովուրդն ունին. իսկ իմ ժողովուրդն իմ մէջն է: Ես մտնում եմ բնակարանս և ամփոփուած մտքերով նըստում:

Այս ասաց խխունճը, մտաւ իւր բոյնը և ծածկուեցաւ:

— Այ՛ո, շատ ցաւալի է այս, ասաց վարդի թուփը: Որքան էլ աշխատեցի, չը կարողացայ ամփոփել մտքերս և մնալ անգործ. բոլոր իմ շնորհը դուրսն է, ծաղկում եմ և բաց անում վարդերս: Երևի իմ ճակատագիրն էլ այս է: Վարդերիցս թափվում են բոլոր թերթիկները և քամին տանում է այս կողմ այն կողմ: Բայց ես տեսայ որ իմ մի վարդը մի գեղեցիկ օրիորդ գրեց ձեռքին բռնած իւր սիրած գրքում, միւս վարդովս զարդարեց իւր կուրծքը նմանապէս մի ուրիշ սիրուն օրիորդ, իսկ մի այլ վարդս մի փոքրիկ երեխայից ջերմ համբույրներ ստացաւ, զուարճացնելով նորան:

— Այս բոլորն այնպէս քաղցր էր ինձ համար, որ խօսքով չեմ կարող պատմել:

— Ահա՛ իմ չիշատակարանը, ահա՛ իմ կեանքը:

Եւ վարդի թուփը ծաղկում էր և ծաղկում առանց մտածելու, իսկ խխունճը կար անշարժ, իւր բնակարանի մէջ հովանալով:

Անցկացան շատ տարիներ:

Խխունճը գետնի մէջ հող դառաւ. օրիորդի գրքի մէջ պահած վարդն էլ չմշկեց:

Բայց այդում ծաղկում էին նոր վարդի թփեր և այնտեղ կենում էին ուրիշ խխունճներ:

Նոր խխունճներն էլ մտնումէին իրանց բնակարանը և ոչ ոքին ուշք չը դարձնում՝ աշխարհից հեռացած պահելով իրանց։

Եւ այսպէս, և այսպէս շարունակվումէ պատմութիւնը և մի մազաչափ էլ չէ փոխվում։

Թարգ. Գ՝ Տ. Ա.



Կ Կ Ո Ւ

Այլուն ապրումէր դաշտի վերայ անտառի մօտ։ Նա իւր ձուաններն ածումէր շարունակ ամբողջ տարին մի մի հատ և որովհետեւ ինքը թուխս նստել չէր կարող մի մի հատ ձուի վերայ, այդ պատճառով նա տանումէր իւր ձուանները դնում ուրիշ թռչունների բոյներում մի մի հատ։

Եկան թռչունները տուն և գտան մի մի աւելորդ ձու իրանց բոյների մէջ։ Զարմանքով էին նայում նորա վերայ։ Երբ նոքա իրանց բոլոր ձուաններն ածեցին, թուխս նստեցան։

Ձուաներից թռչնիկներ դուրս եկան և ամէն մէկ թռչունին մի մի կկու եղաւ. թռչունները սիրեցին փոքրիկ կկուներին և կերակրումէին նոցա մեծ խնամքով, ինչպէս իրանց ձագերին։

Երբ կկուները մեծացան, նոքա սկսեցին շատ ուտել։ Նոցա ծծմալրները մեծ թռչուններ չէին և չէին կարող շատ կերակուր կրել. նոքա իրանց սեպհական ձագեր էլ ունէին, որոնց նոքա կերակրումէին։ Այլուններն ուզեցին որ ծծմալրների բերած բոլոր կերակուրը նոցա միայն հասնի և մի անգամ, երբ նոցա ծծմալրները կերակրի վերայ գնացին, նոքա դուրս ածեցին բոյնից ուրիշ թռչնիկներին, իրանց ծծմալրների սեպհական ձա-

գերին: Ինչ որ բերումէին այժմ ծծմայրները, հասնում էր միայն կկուններին. և նոքա մեծացան այնպէս ուժեղ, որ հազիւ թէ կարողանային այդպէս լինել իրանց մայրերի մօտ:

Պառաւ կկուն, մայրը, տեսնելով որ իւր ձագերն աւելի լաւ են մեծանում օտար թռչունների մօտ, քան թէ իրան մօտ, սկսեց միշտ իւր ձուաներն ածել ուրիշի բոյներում:

Այն ժամանակից սկսած կկուն այլ ևս իւր համար բոյներ չէ շինում, այլ միշտ ձուաներն ածումէ ուրիշ թռչունների բոյներում, երբ սոքա թռչուններ կերակրի համար և կկունները գիտեն, որ իրանց ձագերն աւելի լաւ կապրին ուրիշ թռչունների մօտ, քան թէ իւր մօտ:

Թարգ. օր. Գ. Յովհաննիսեան:

ԶՈՒԱՐՔԱԻՔ, ՉԱՆԵԼՈՒԿՆԵՐ, ԽՆԴԻՐՆԵՐ:

Առաջին եւ երկրորդ համարների մէջ գտնուած զուարմարիքների բացատրութիւնները:

- 1) Աննա. 2) Քաղաք. 3) Ամսագիր. 4) Զատիկ.
5) Յարգ—գող: Գիտէ՞ք ի՞նչ է յարգ գողը: *

* Երկնքում պարզ գիշերին ամենայն ժամանակ կարելի է տեսնել ամպի պէս թեթեւ և սպիտակ շրջանակ, որ կամարաձև դժով ձգվումէ հարաւից դէպի հիւսիս: Այդ շրջանակը կազմուած է մանր աստեղների անհամար բաղմութիւնից, որ իրանց ստառիկ հեռաւորութեան պատճառով և խտութեամբ, խառնուելով իրանց ճաճանչներով, միմեանց շարունակութիւն են երևում: Սոքա արձակումեն աղօտ լոյս՝ սպիտակ իրրե կաթ. այս պատճառով էլ կոչվումէ և ձիւ կաթի: Մեր լեզուով դա իւր յարգ-գող կամ մանաւանդ հետոյ յարգ-գող անունն ստացաւ մեր նախնի Վահագնի պատճառով: Պատմութեն թէ սա խիստ ձմեռ ժամանակ գողանալով շատ յարգ Ասորեստանի Բարշամ թագաւորից, փախչելու ժամանակ ճանապարհին թափթփեց յարգը, թողնելով իւր յետեւից յարգի հետքեր: Այս պատճառով մեր մէջ աւանդութիւնէ մնացել իրր թէ երկնքի կաթնածիր շրջանակը նոյն յարգի հետքերն են, այսինքն յարգ գողացող Վահագնի շաւիղը:

6) խարիսխ—խորիսխ.

7) Բարև-քեզ-իմ-ծանոթ-կարթ-աց-ող.

(Բարև քեզ իմ ծանոթ կարգացող)

8)

		ժ		
	ս	հ	խ	
ժ	հ	խ	ա	կ
	խ	ա	չ	
		կ		

9)

		դ		
	ժ	ա	հ	
	թ	ա	թ	ո
1	ի	2	ա	տ
			ա	կ

10)

զ	ա	ն	դ
ա	լ	օ	լ
ն	օ	ճ	ի
դ	լ	ի	չ

(Առաջ. ներ. Դպր. 6-դ. դաս. աշ. Թ. Ասողմեան)

11)

Յ



8

ի

կ



անք

365



օր



լիզ

12) Առաջ. պ. Ա. Բ.

ՀԱ



Բ



ՈՒ



ԻՐ.

13) Առաջ. պ. Ա. Բ.

1



Ի



, ու



ան ան ան

ան ան


ան

, Ծ



,

4



14) Մի պարոն ստացաւ 32 շէշ գինի: Յանձնելով այս գինին իւր ծառային, պարոնը պատուիրեց տանել նկուղը և դարսել այնպէս, որ ամէն կողմից ել լինի 9 շէշ:

32 շէշ

1	7	1
7		7
1	7	1

Ծառան գողանումէ 12 շէշ գինի երեք անգամ և ամէն անգամ չորս չորս շէշ, սակայն պարոնի հրամանը ճշտութեամբ կատարումէ, դարսելով այնպէս որ ամէն կողմից ել ինը շէշ էր: Ի՞նչպէս էր դարսում շէշերն ամէն անգամ ծառան:

15)

Այս աղիւսակի մէջ գրեցէք թուեր 1 մինչև 9-ը
այնպէս, որ որ կողմից էլ կարդալու լինինք, հա-
ւասար լինի 15-ի. միայն միւսնոյն թուանշանը
երկու անգամ չըպէտք է կրկնուի:

16) Առաջինը-ծառի հիւթալից պտուղ է, երկրորդը —
սալի մի մասն է, իսկ ամբողջը՝ թռչունն է: Իմացէք ինչ է:

17) Երեք հայր, երեք որդի միասին կազմում են չորս
հոգի. կարող է անգեօք այդ պատահել:

18) Աղջկայ մի անուն կայ, եթէ առաջ նորա երկ-
րորդ վանկն եմ կարդում, աղջկայ ուրիշ անուն եմ ստանում:
Գտէք այդ անունը:

19) Ի՞նչ ազգականութիւն կայ ձեր և այդ պարոնի
մէջ, հարցնում էր մի տիկին միւսին: Պատասխան եղաւ՝ դո-
րա մայրն իմ մօր միակ զաւակն էր: Ի՞նչ ազգականութիւն
կար արդեօք դոցա մէջ:

20) Մի խօսք ունիմ երկու բառից.

Նորան դարձրել էք ձեզ սիրելի.

Թէ թոյլ կը տաք որ անէի,

Նորանից մասեր կը կազմէի:

Առաջին մասին ես ծնող կասէի,

Որ նոյն խօսքի պէս սիրելի է ձեզ.

Միւսը կը լինի մի ձայնաւոր տառ.

Երրորդն է՝ գետ Եգիպտոսում,

Թէև հայերս այլ կերպ ենք ասում.

Չորրորդով միշտ մեր գիւղացին

Իրան ապրուստ է հայթհայթում.

Վերջինը՝ հնչիւն է ձայնաւոր,

Որ գրվում է երկու տառով:

Դէհ, իմացէք հիմա, տեսնեմ —

Թէ չէ ինքս կը բացատրեմ:

ԽՄԲԱԳԻՐ—ՀՐԱՏԱՐԱԿՈՂ. Ն. ԽՈՍՐՈՎԵԱՆ

Дозволено цензурою. Тифлисъ, 12 Октября 1882 г.

Типография М. Варганица и К. противъ Троиц. церк.

«Թիֆլիսի Բնկերութեան Հայերէն գրքերի հրատարակութեան»
մինչև այսօր հրատարակած գրքեր՝

	ա.	կ.
1. Թաւամալ Մեղու. թարգ. օր. 'ն. Տէր Մարկոսեան.	—	40
2. Կարմիր Լապտեր. թարգ. օր. 'ն.	—	50
Նոյնը առանց կազմի	—	30
3. Թովմաս եղբօր տնակը. թարգ. օր 'ն. Տէր—Մարկոսեան	—	60
Նոյնը առանց կազմի	—	45
4. Մանկական Երգեր. Գամար—Քաթիպայի	—	25
Նոյնը առանց կազմի	—	15
5. Մորեխ ու նորա ջնջելու հնարները: պ. Տէր Բարսեղեանի	—	10
6. Առողջապահական ընթերցանութիւն. Նեղ ու խոնաւ բնակարանների մասին պ. Հ. Առաքելեանի	—	10
7. Սրբոյ Հօրն մերոյ Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց—	80	
8. Փոքրիկ Ձերնարկ Գործնական տնտեսութեան Մօրիս Բլօքի. փոխադրութիւն պ. Ս. Պալասանեանի	—	50
9. Ռօբինզօնի պատմութիւնը. թարգման. Գիւտ քահանայ Աղանեան	—	60
10. Գամառ — Քաթիպայի բանաստեղծութիւնքը, կազմած. 1	20	
Նոյնը առանց կազմի	—	50
11. Ուստաւորք. գործ Վիլհելմ Հաուֆ	—	75
12. Գառնուկ եւ Լուսատունիկ. վէպեր Քրիստափոր Շմիդտի—թարգ. Նուարդ	—	25
13. Սայաթ Նօվա. աղագային երգիչ	—	5
14. Ծննդեան պատմութիւնը եւ մայիսեան տօնը Փինլեան. գիւյում—Վէպիկներ—թարգ. ուսերէնից	—	10

Կարելի է ստանալ Բնկերութեան գրասենեակից եւ միւս հայ
գրավարձառնոցներից:

1882 թվին Ռուսաստանում տպագրուել են հետևեալ հայերէն գրքերը և վաճառվումն են Թիֆլիսի գրավաճառների մօտ:

Ձէստէրտօնի ժառանգը	.	.	.	1 "
Վուչեւորիչ. Երկու տօնածառ	.	.	.	20 4.
Աղայեան. Արինդ հովուական	.	.	.	20 —
Հայորդի. Սրբազան պատմութիւն I մ.	.	.	.	50 —
" " " II մ.	.	.	.	50 —
Եւտուլէսկի. Թուաբանական խնդիրներ I մ.	.	.	.	50 —
" " " II մ.	.	.	.	50 —
Շմիդտ. Թուղթ խաղացողի բաղդը	.	.	.	25 —
Ժ. Սան. Վարդագոյն ամպ.	.	.	.	25 —
Մանդինեան, Դիւցազնական աշխարհ	.	.	.	30 —
" Նահապետական աշխարհ	.	.	.	65 —
Սմբատեան. Լօտօ հայերէն տառերով	.	.	.	1 " 20 —
Նուարրօ. Երկար կեանք	.	.	.	1 —
Ռաֆֆի. Գաւիթ բէգ III. մ.	.	.	.	2 —
" Ոսկէ աքաղաղ	.	.	.	1 — 20 —
Իւզբաշեան. Հացի բղջիկ	.	.	.	40 —
Բահաթրեան. Այբբենարան	.	.	.	4 —
" Առաջին ընթերցարան	.	.	.	20 —
" Ուղեցոյց Հայ ուսուցչին	.	.	.	1 " .
" Հոգեբանութիւն	.	.	.	1 " .
Նաւասարդեան. Հեքիաթներ	.	.	.	30 —
Դիքքէնս. Հարս և սկեսուր.	.	.	.	15 —
Անդէրսէն. Սոխակ և խոզարած	.	.	.	20 —
Խատիսեան. Մանկավարժական խորհրդածութիւններ	.	.	.	60 —
Փիղալէմեան. Չորս ընկերք	.	.	.	50 —
Ծիծեռնակի բունը	.	.	.	20 —
Ինչ է խօսում սենեակը	.	.	.	20 —
Վարսենիկ	.	.	.	20 —
Ծննդեան պատմութիւնը	.	.	.	10 —
Շմիդտ. Գառնուկ և լուսատետիկ	.	.	.	25 —
Սայեաթնովա. աղգային երգիչ	.	.	.	5 —
Ժորժ Սան. Գարիբալդի	.	.	.	10 —
Սափարեան. Էս էլ իմ սաղը	.	.	.	1 " .
Տէր-Յակովբեան. Հայաստանի քարտէզ.	.	.	.	25 —
Հէյնէ. Ծաղկաքաղ բանաստեղծութիւններ	.	.	.	40 —
Հաուֆ. Ուխտաւորք	.	.	.	75 —
Հոգէփոխութիւն կամ կախարդուած պրինց	.	.	.	20 —
Մայրենի լեզու ա. տ. 9-դ. տպագրութիւն	.	.	.	35 —

(կր շարունակուելի)